



## Խորհրդատուական աշխատանքի հնարավորություն

Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքը կը փնտռէ խորհրդատու մը՝ «Տեղեկատուական թեքնաբանութիւն եւ լեզու» ոլորտին մէջ, համապատասխան ծրագիրներ մշակելու եւ առկայ նախագիծերը ղեկավարելու համար:

Խորհրդատուն պէտք է մասնագիտացած ըլլայ լեզուի եւ տեղեկատուական թեքնաբանութեան (այսուհետ՝ ՏԹ) մէջ (օրինակ՝ ուղղագրիչներ, քերականութեան գործիքներ եւ այլն): Խորհրդատուն պարտի զեկուցել Բաժանմունքի տնօրէնին եւ սերտօրէն համագործակցիլ փոխտնօրէնին եւ Հիմնարկութեան համապատասխան աշխատակիցներուն հետ:

## Առաջադրանքներ

Խորհրդատուն պատասխանատու պիտի ըլլայ երեք գլխաւոր գործառնություններու: Առաջին, խորհրդատուութիւն տրամադրել Հայկական Համայնքներու Բաժանմունքին ՏԹ/լեզուի վերաբերեալ ծրագիրներու շուրջ, գնահատելով անոնց իրագործելիութիւնը, առնչելիութիւնը եւ կարելորութիւնը: Երկրորդ, ղեկավարել Բաժանմունքին ձեռնարկած (կամ ձեռնարկելիք) մեծ ծրագիրներէն որոշներ, ներառեալ Արեւմտահայերէն ուղղագրիչի եւ լեզուի շտեմարանի նախագիծը՝ համագործակցելով արտաքին գործընկերներու հետ: Երրորդ, մշակել Բաժանմունքին երեք տարուայ ռազմավարական ծրագիր՝ ՏԹ եւ հայերէն լեզուի ոլորտին մէջ:

## Լրացուցիչ յստակ պարտականութիւններ

1. Առաջարկել ծրագրային գործնական քայլեր՝ հիմնուելով 2023-ի Երեւանի ՏԹ/լեզուի [հանդիպումին](#) վրայ:
2. Գնահատել զեկույցներ, պիտճէներ եւ ծրագրի առաջարկներ:
3. Կապ հաստատել համապատասխան անձերու հետ՝ ծրագիրներու իրականացումին եւ զարգացումին համար:
4. Հետեւիլ Բաժանմունքին հովանաւորած ՏԹ նախաձեռնութիւններու գործադրումին:
5. Գրել համապատասխան նամակագրութիւն եւ այլ նիւթեր, հայերէնով եւ անգլերէնով:
6. Կատարել անհրաժեշտ հետազոտութիւն ՏԹ/լեզու ոլորտին մէջ:
7. Կազմակերպել ՏԹ/լեզու աշխատանոցներ, հանդիպումներ կամ նմանատիպ միջոցառումներ:
8. Պատրաստել հայերէն ՏԹ/լեզուի գործիքներու վերաբերող հաղորդակցութիւններ:
9. Ըստ անհրաժեշտութեան, մասնակցիլ գիտաժողովներու, միջոցառումներու եւ հանդիպումներու՝ Բաժանմունքի ծրագիրները ներկայացնելու համար:
10. Որեւէ այլ առաջադրանք, որ կը համընկնի խորհրդատուի հմտութիւններուն եւ անոր ղեկավարած ծրագիրներուն հետ:



### **Պահանջուած հմտութիւններ**

- Լեզուի իմացութիւն. հայերէնի (նախընտրաբար՝ արեւմտահայերէն) եւ անգլերէնի տիրապետում: Ֆրանսերէնի իմացութիւնը առաւելութիւն է:
- Արհեստագիտական զարգացումներու իմացութիւն, հայերէն լեզուին առնչուող թեքնաբանական խնդիրներու ըմբռնում եւ ծրագրաւորման մասնագիտական գիտելիքներ:
- Նախագիծերու կառավարումի փորձառութիւն:
- Համալսարանական աւարտական վկայական՝ համապատասխան նիւթով:
- Բարձր մակարդակի անձնական հմտութիւններ, եւ հայկական կազմակերպութիւններու հետ գործակցելու փորձառութիւն: